

ՀՀ տարածքային կառավարման և
գարգացման նախարարություն



ՀՀ տրանսպորտի կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարություն

«Հայաստանի ավտոմոբիլային
ճանապարհների տնօրինություն»
ՊՈԱԿ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների
(կամուրջների) վերանորոգման, վերակառուցման և կառուցման նախագծերի
պատրաստման համար անհրաժեշտ առաջադրանքի/տեխնիկական բնութագրի
կազմման



Երևան 2019

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավտոմոբիլային ճանապարհները, կախված երթևեկության հաշվարկային ինտենսիվությունից և գործառական նշանակությունից, ստորաբաժանվում են ըստ կարգերի՝ համաձայն Ավտոմոբիլային ճանապարհների ՀՀՇՆ-11.05.02-99 թիվ 1 աղյուսակի:

1. Կիրարկման ոլորտ

Սույն ուղեցույցը կիրառելի է ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) վերանորոգման նախագծերի պատվիրման, ծախսերի գնահատման առաջադրանքի (այսուհետև՝ տեխնիկական բնութագիր) կազմման համար: Այն նպատակ ունի «համայնքներին տրամադրել մեթոդական ցուցումներ՝ ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման ծրագրի շրջանակներում ճանապարհների վերանորոգման (տեղական նշանակության ճանապարհների ընթացիկ նորոգման, միջին նորոգման, հիմնանորոգման կամ կապիտալ վերանորոգման, այդ թվում վերակառուցման) և տրանսպորտային օբյեկտների վերանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների տեխնիկական բնութագրերի կազմման վերաբերյալ:

2. Համառոտ նկարագիր

Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) նախագծման փուլերը տարբեր են նոր կառուցվող ճանապարհների, տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) և գոյություն ունեցող ճանապարհների և և տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) վերանորոգման դեպքում: Գոյություն ունեցող ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) վերանորոգման համար հիմնականում պատվիրվում են աշխատանքային նախագծեր, որոնք անցնում են պարզ փորձաքննություն:

Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) վերանորոգման որակյալ նախագիծ ունենալու համար անհրաժեշտ է նախագծողին տրամադրել նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պատշաճ տեխնիկական բնութագիր:

Տեխնիկական բնութագրում պետք է նշված լինի՝

- ճանապարհի անվանումը և վերանորոգման ենթակա տեղամասը,
- ճանապարհի կարգը
- ճանապարհը բնութագրող նկարագիրը /գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը/

- երթևեկելի մասի լայնությունը
- շարժման գոտիների քանակը
- մայթերի առկայությունը և լայնությունը
- կառուցման/վերանորոգման ենթակա հատվածի երկարությունը
- կամրջի սխեման,
- ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը
- նախագծման փուլը, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջները,
- հետազննման և նախագծի նկատմամբ պահանջները,
- անհրաժեշտ փորձաքննությունը

3. Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը

Աշխատանքների իրականացման ժամանակ հաշվի առնել, որ ճանապարհային պատվածքի և ծածկի շերտերի քանակը և խտությունը կախված են ճանապարհի տեսակից, երթևեկության ինտենսիվությունից, կլիմայից և հիմնատակի պայմաններից:

1) ճանապարհների նորոգման դեպքում՝

- նստվածքների ուղղում՝ հարթեցմամբ և պնդեցմամբ,
- թափվածքների մաքրում,
- շեպերի ուղղում, հարթեցում և ամրացում,
- խրամուղիների ու ջրատար կանալների մաքրում,
- կողային առուների մաքրում, ակոսահանում և ամրացում,
- կողնակների լայնացում ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում, դրանց ուղղում, ամրացում և լրացում
- ջրահեռացման վաքերի մաքրում, նորոգում և լրացում,
- ճանապարհային ծածկի հարթեցում,
- ճանապարհային ծածկի միաշերտ փոխարինում
- մակերեսի մեկուսացում՝ ներառյալ մակերեսային մշակում և նոր միաշերտ ծածկի կառուցում
- միաշերտ ճեղքերի փակում,
- հողային պաստառի լայնացում՝ ոչ բավարար լայնացում ունեցող տեղերում՝ մինչև ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառների սահմանված չափերը
- առանձին եզրաքարերի ուղղում,
- մայթերի նորոգում,
- ճանապարհային նշանների և անվտանգության տարրերի նորոգում, փոխարինում և

լրացում,

- ճանապարհային նշագծման իրականացում,
- հենապատերի նորոգում և ուժեղացում

2) ճանապարհների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման դեպքում

- ճանապարհային պատվածքի և ծածկի ամբողջական վերանորոգում/կառուցում,
- հողային պաստառի և ճանապարհային կառույցների ամբողջական վերանորոգում/ վերակառուցում/կառուցում,
- մաշված ճանապարհային կառուցվածքների և տարրերի փոփոխում կամ դրանց փոխարինում ավելի ամուր և երկարակյաց կառուցվածքներով և տարրերով,
- հենապատի վերականգնում /վերակառուցում/կառուցում (եթե անհրաժեշտ է),
- մայրթերի վերականգնում/վերակառուցում/կառուցում (ըստ անհրաժեշտության),
- ջրահեռացման համակարգի վերակառուցում/վերանորոգում/կառուցում (ըստ անհրաժեշտության),
- արհեստական կառուցվածքների վերակառուցում /վերանորոգում/կառուցում,
- ճանապարհային կահավորանքի և անվտանգության տարրերի վերանորոգում/ վերակառուցում/կառուցում:

Աշխատանքների կատարման ժամկետը՝

Սկիզբը և ավարտը:

4. Նորմատիվային վկայակոչումներ (տեղեկատվական)

Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) նախագծման և շինարարական աշխատանքների կատարման, ընդունման, պահպանման ու շահագործման գործող ստանդարտների և նորմատիվային վկայակոչումների թվաքանակի մեծությունից ելնելով, սույն ուղեցույցում հնարավոր չէ ամբողջովին թվարկել դրանք, ուստի ստորև ներկայացվում են այն նվազագույն (ոչ ամբողջական) նորմատիվային վկայակոչումների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք անհրաժեշտ են ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների (կամուրջների) վերանորոգման նպատակով աշխատանքային նախագծերի պատվիրման համար տեխնիկական բնութագրեր կազմելու համար:

ՀՀՇՆ ^-11.05.02-99 - Ավտոմոբիլային ճանապարհներ:

ՇՆևԿ 2.05.03-84 - Կամուրջներ և խողովակներ:

«ՇՆ 1-2.01-99 - Ինժեներական հետազննություններ շինարարության համար:

ԳՕՍՍ 32836-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ավտոմոբիլային

ճանապարհների հետազննում: Ընդհանուր պահանջներ:

«ՇՆ 11-7.01-96 - Շինարարական կլիմայաբանություն:

ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշման Հավելված 8 - Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգը:

ԳՕՍՏ 33100-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ավտոմոբիլային ճանապարհների Նախագծման կանոնները:

ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն որոշումը՝ ճանապարհային գծանշանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատերին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելու մասին:

ԳՕՍՏ 21.511-83 - Նախագծային փաստաթղթերի համակարգ շինարարության համար: Ավտոմոբիլային ճանապարհներ. Հողային պաստառ և ճանապարհային հագուստ: Աշխատանքային գծագրեր:

ԳՕՍՏ 32868-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ինժեներաերկրաբանական հետազննման իրականացման պահանջներ:

ԳՕՍՏ 32869-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Ինժեներագեոդեզիական հետազննման իրականացման պահանջներ:

ԳՕՍՏ 33179-2014 - Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Կամուրջների և ուղեանցների հետազննում: Ընդհանուր պահանջներ:

ՀՀՇՆ 22-03-2017 - «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմեր: